

# ՊԱՏՄԱԳԻՏՍՈՒԿԱՆ

ՍՏ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ.

(Գրուած Վ.—Ազուլեցի Մելքոն Փանեանցին).

29.

Թիֆլիս 7-ին սեպտ. 1870.

Իմ ազնիւ, մի հատիկ բարեկամ,

Իմ նամակս առ ձեզ անցեալ ամուս 23-ից<sup>1</sup>) հանդերձ մի փոխանակագրով (վ.քսելով) ստացած կը լինիք և յուսամ, որ լցուցած կը լինիք մինչև այժմ նորա պարունակութիւնը, արծաթ ու զարկելով իմ եղբորը Հաշտարխան: Այս մասին ոչինչ այլ խօսելի բան չկայ, որովհետև գործը ամենևին վաճառական հաշիւ լինելով, կերթայ իւր օրինաւոր կարգով, պարտք ստանալով և հատուցանելով իւր վաճառական տոկոսիքի հետ միասին:

Դուք ստանում էք ինձանից մի նամակ Խրիստոֆօր Եակիմովիչի հասցէով. զրա առիթը եղաւ Լազար Մանուէլիչի առ իս գրած շատ տաք-տաք նամակը օգոստ. 27-ից, որի մէջ նա կենդանի գուներով նկարագրած էր այն բարի և մեծախօստունն զիտաւորութիւնքը, որ իբրև թէ այժմեան գերագոյն կառավարիչը ինստիտուտի, զրաֆ Տօլստօն յայտնած էր ինստիտուտի խորհրդում, ասիական լեզուների ապագայ շատ շահաւէտ դասատուութեան վերայ, և որպէս թէ մի արեւելեան ֆակուլտէտ պիտի կազմուէր այդ տեղ: Ըն շատ ծանրութեամբ խօսում է այդ նիւթի վերայ, համոզելով զիս բոլորովին:

Եթէ ճշմարտապէս այդպէս է իրը և եթէ Պարսից և Արաբացոց լեզուի դասատուութեան խնդիրը տակաւին վճռուած չէ, այսինքն որ և իցէ մարդու յանձնած չէ այդ լեզուների դասատուի կամ պրօֆեսսորի պաշտօնը, ապա կը յանձնէք այդ նամակը Խրիստոֆօր Եակիմովիչին, ապա եթէ խնդիրը վճռած է արդէն, այսու հետև անօգուտ կը լինի միագամայն: Միտ զնելով Լազար Մանուէլիւիչի նամակին, պիտոյ էր այլապէս մտածել. ապա թէ ոչ, ամենևին անխորհուրդ է նորա գրութիւնը: Ուրեմն կը վարուիք Դուք այնպէս, ինչպէս կը ցուցանէ Ձեզ գործի պայմանը:

1) Յիշեալ նամակը (հանդերձ փոխանակագրով) գրած է ո՛չ թէ օգոստ. 25-ին—ինչպէս ասւած է այս նամակում—այլ օգոստ. 12-ին. այստեղ մի թիւրիմացութիւն կայ, կարծում ենք, օգոս. 12-ին ուղարկած փոխանակագրի ոյժի մէջ մտնելու (օգոստ. 25) օրն է, որ այստեղ սխալմամբ յիշուած է (օգոստ. 25). Յ. Տ. Յակ.

Խնդրեմ ինձանից շատ ու շատ ողջունել մեր սիրելի բարեկամ Լազար Մանուէլովիչը և ասել նմա իմ կողմից, որ ես ցաւում եմ այն անսխորժ յարաբերութեան վերայ որ կայ նորա և Քանոնովի մէջ. բայց զորա միակ պարզ պատճառն է էմինի այժմեան մօտաւորութիւնը Քանոնովին, որոյ սիրտը նա (էմինը) զրահաւորած է ընդդէմ Լազարեւիին, ինչպէս միշտ նորա բանը և զորը եղած է: Քանոնովը էմինի ամենեկին մօտաւոր ազդեցութեան տակ լինելով այժմուս, ի հարկէ նոյնպէս պիտի ատէր և արհամարէր Լազարեւի: այլապէս անկարելի է, ի այց ես ցաւում եմ, որ էմինի ծերութիւնը պաղեցուցած չէ տակաւին նորա մէջ տեղ չարեացականութեան ակտը առ մարդիկ. ամեն մարդ ունի իւր պակասութիւնքը. և սոցա վերայ միայն դադարեցուցանել իւր աչքը, կուրանալով ընդդէմ կատարելութիւններին, որ աւելի բազմաթիւ են քան թէ պակասութիւնքը, ամենեկին տմարդութիւն է և շարժանց վատթարութիւն: Ամեն մարդ մեզ պէս կարող չէ լինել, և ո՛վ ասաց, թէ մեք ամենակատարեալքս եմք, առանց ամենայն պակասութեան, անթերի և անարատ: Բայց ոչ. Աստուած ոչ արհամարէր: կայ արդարադատութիւն, և դա մի օր հասուցումն կաննէ և էմինին, թէ և նա մինչև երկինք բարձրանար, այնքան բարձր, որ շունչը կտրուէր և դէպ ի վայր կործանուէր:

Յանկանալով Ձեզ ողջ և աողջ լինել հոգով և մարմնով, մեզ  
զՁեզ անսխորտ սիրով սիրող

Բարեկամ

Ս. Նազարեանց.

Սիրոյ և յարգանքի ողջոյն ուղարկում են Ձեզ և մեր բոլոր բարեկամներին—մերայինք:

Իմ հասցէս գրեցէք այժմ Հայոց ուսումնարանի վերայ

Въ домѣ армянской дух. Семинаріи.

### 30.

Թիֆլիզ, 23 սեպտ. 1870

Իմ ազնիւ, հոգեհարազատ բարեկամ,

Ձեր պատուական նամակը ամուս. 12 թուականից անկորուստ ստացայ և շտապում եմ մատուցանել Ձեզ իմ հօգուով չափ շնորհակալութիւնը վասն այն կարևոր տեղեկութիւններին, որ ինձ հասուցած էիք ի մասին իմ տեղափոխութեանս դէպ ի Մոսկուա. այլև վասն Ձեր բարեկամական հոգաբարձութեան հասուցանելու իմ եղբորը նրա խնդրեալ արձաթը (1300 ման.): Յուսով եմ, որ Քուրդովը Հաշտարխանու պօստամտում հարցանելով, իսկոյն կը գտանէր իմ կըրօր հասցէն, մանաւանդ որ եղբայրս, ինչպէս ինձ ասաց, խնդրելու է այդ արձաթը այն տեղ, ուրեմն և այն տեղ թողնելու

էր իւր հասցէն, եթէ առաջին նուագում չկար փոխանակութեւ զթը Չեղանիցը կարծեմ որ վաճառական մարդիկ այս գործի մէջ աւելի ճարտարութիւն ունենան քան թէ ես:

Սոյն նամակիս հետ ուղարկեցի նամակ առ պարոն Քանանեանցը, լիովին տեղեկութիւն տալով նմա իմ Թիֆլիզեան ցաւերի և կեանքի ամենին անյարմարութիւնների մասին, խնդրելով նորան, որ բարեկամական հոգաբարձութեամբ աշխատի և հնարք հնարէ իմ տեղափոխութեանս դէպ ի Մոսկուա, որով զիս յաւիտեան շնորհապարտ կը կացուցանէ իւրեանս ևս մտածում եմ, որ նա առ իս բարեմիտ է, և այս պատճառով խօսեցի նորա հետ ամենայն բարեկամական վստահութեամբ, մանաւանդ որ ևս միշտ պատուած եմ զնա և նա միշտ մասնակից է գտանուած իմ ցաւին և ուրախութեանը: Տարակոյս չկայ, որ և Դուք Չեր կողմից գործ կը զնէք պատշաճաւոր հնարները—եթէ տակաւին հարկաւոր էր, տրամադրել նորա սիրտը և հոգին գէպ ի այս գործը, այլ և Նիկոլայ Դաւիթովիչ Դելիանովի կամքը և հաճութիւնը նոյն մասին, որովհետև ևս կշռելով իմ այժմեան կեցութեան և կացութեան բոլոր պայմանքը Թիֆլիզում, այսինքն մեր Հոգաբարձուների անմիաբանութիւնը ու բխմիտ անհոգութիւնը ուսումնարանի բարեկարգութեան մասին և յառաջադիմութեան ըստ ժամանակի պահանջմանը, որոյ համար համար ու խուլ են սորա, այլ և իմ բարեմիտ առաջարկութիւնքը մնում են միշտ զուր և անպտուղ, ուրեմն և ևս աւելորդ եմ այս տեղ, թող քաղաքի բարբարոսական թանգութիւնքը և յիմարական կարգերը—այս բոլորս կշռելով, ինձ ցանկալի էր որ մի յառաջ բարեաւ մնա առել այս Թիֆլիզին, ուր ևս, կատարեալ, իբրև խորխորատի մէջ ընկայ, մոլորուած և յափշտակուած լինելով իմ անպայման հայրենասիրական ձգտողութիւններից:

Պիտոյ է ուղղել մեր արած սխալները թէ և զա պիտի պատրաստէր ինձ նորանոր զրկանք, նորանոր ծախք, մանաւանդ իմ ամենեին չբաւորութեան մէջ, որում հասանել այս տեղ շատ դժուար բան է: Ահրաստին տեղափոխուել դէպ ի Մոսկուա, վերստին կարգիլ այն տեղ իւր տնտեսութիւնը, զկնի մի անգամ ստացածին ու կորուսածին, արգանի դժուարին ինդիր, բայց և մեռանել այս դարչելի, անսիրտ ու անհոգի մարդերի մէջ, ինձ անկարելի է: Ուրեմն գործ և աշխատութիւն, մինչև կը հասանէինք մեր նպատակին:

Մի մարդ միայն կայ Թիֆլիզում, որ կարեկից է իմ ցաւին և պատրաստ օգնել, երբ դանակը հասած էր կոկորդին, նիւթակահապէս, բայց բարոյական ցաւերը անբժշկելի են, որովհետև զորս մեր ուսումնարանի տասներկու ղլխանի վիշապից և նոցա միախոզելիանի վիշապապետից է:

Ս.յն մի մարդը է մեր սիրելի ազնիւ Յակոբ Սերոբեանը, որ

միշտ պիտի հատուցումն անէ արծաթով իմ տանուտեսարցը որ մարդ են կլանում այս տեղ, բոլոր տարեկան արծաթը իբրև վարձ տան յառաջուց կեղեքելով մարդոց ևւ այս անգամ հարկաւոր եղաւ վճարել նոր բնակութեան համար 400 ման. միանգամայն Այսպէս ապահ ու անհաւատ մարդիկ տեսած չեմ Մոսկվայում իմ քսանամեայ այն տեղի կեցութեանս մէջ:

Ես իրաւունք եմ տալիս Ձեզ բանալ իմ նամակը առ Սրիստոֆօր Լազարեանցը, որ արդէն ստացած կը լինիք Ձեր նամակի մէջ փակած ամսուս առաջին թուականներից: Ես տալիս եմ Ձեզ նոյնպէս իրաւունք, եթէ Դուք արժան կը համարէք ցուցանել Նիկոլայ Դաւիդովիչին, որովհետեւ զա գրած է շատ քնքուչ հոգով և պիտի քաղցր տպաւորութիւն գործէ Լազարեանց որ և իցէ ազգականի վերայ և ինստիտուտի բոլոր կառավարիչների վերայ, ըստ որում զոքս այդ նամակից ակնյայտնի կարող էին եզրակացնել, որ իմ սրտում տակաւին կենդանի են այն քաղցր յիշատակները, որ ես նուիրում եմ ինստիտուտին և Լազարեանց ազգատոհմին: Մի խօսքով ես տալիս եմ Ձեզ լիակատար իրաւունք գործ զնել այդ թուղթը, որպէս պատշաճ կը համարէք Դուք, երբ որ բացած էիք զայն և տեղեկացած նորա բովանդակութեանը: Եթէ տեսանէք, որ արժէ այդ նամակը մատուցանել իւր հասցէին, ապա կարող էք վերստին կնքել և մատուցանել ում հարկն է: Այդ բոլորը թողվում է Ձեր խոհականութեան կամքին և բարետեսութեան:

Ի՞նչպէս երկնային ուրախութեամբ ուրախ կը լինէի դարձեալ միանգամ գրկախառնել զՁեզ. իմ մի հատիկ բարեկամոյ այս աշխարհի վերայ. գրկախառնել և լալ անոյշ արտասուքով կրկին տեսութեան, և բերան առ բերան, երես առ երես, սրտէ ի սիրտ պատմել Ձեզ մի առ մի ինչ որ այս սակաւամիջոց—հէ, երկարամիջոց ժամանակում անցաւ իմ գլխից, Մոսկվայից դէպ ի թիֆլիզ և այս տեղի արդէն միամեայ պանդխտութեանս մէջ: Երանական ժամ, որում սպասում եմ ամենամեծ անհամբերութեամբ, Աստուած կատարումն տացէ Ձեր և մեր ամենուրեք կարօտագին փափագին, այն ժամանակ կարող ենք ասել միմեանց. կորած էիր, գտնուեցար, մնում էիր, կենդանացար:

Ոնգրեմ ընդունել իմ գերդաստանի յարգութեան և սիրոյ առ Ձեզ ողջոյնքը և կալ և մնալ ողջ և առողջ վասն

Ձեր երկնաքաղաքացի սիրով զՁեզ սիրող

բարեկամի և եղբօր Սեփաանոսի Նազարեանց.

Ողջոյն և մեր սիրելիներին Մոսկվայում:

Իմ հասցէս

На Садовой улицѣ,

Въ домѣ Аветика Энциаджянца.

2 հոկտ. 1870. Թիֆլիս.

Նզրայրապատիւ բարեկամ

Մեկքոն Գասպարեան,

Ձեր յարգելի նամակը անցեալ ամսու 24 թուականից անկորուստ հասաւ ինձ ամսուս 1-ին. զանազան տեղեկութեամբք, որոց մասին խնդրում եմ ընդունել իմ առ ի սրտէ շնորհակալութիւնը:

Թէ ինչպէս պիտոյ էր Ձեզ ընթանալ Սրբստօֆօր Եակիմովիչի նամակի մասին, արդէն գրած եմ Ձեզ սեպտ. 23-ից առ Ձեզ արձակած նամակիս մէջ, և այնը կրկնուեմ Ձեզ և այժմ. ուրեմն և աւելորդ էր Ձեզ յետ ուղարկել ինձ դայն, բացէք և ընթերցէք և գործ գրեցէք նորա բովանդակութիւնը, որչափ և որպէս հարկաւոր և պիտանի էր մեզ Ինչպէս Դուք ինձ խորհրդակից էիք, ես գրեցի նամակ (բաւական ջերմ և վստահ ոճով) առ պ. Քանանեանցը իմ տեղափոխութեան մասին, որոյ մասին նոյնպէս տեղեկութիւն եմ տուած Ձեզ նոյն նամակի մէջ, ի հարկէ, ինձ այլապէս կարելի չէ տեղից շարժուել, մինչև հաստատուն և օրինաւոր կարգադրութիւն և հրաւրական թուղթ չստանամ Ինստիտուտի մեծաւորների կողմից: Իմ կարծիքն է, որ արքունական ծառայութիւնը ամենից առաւել նախապատիւն է, նախ որ ապահով է և հաստատ. երկրորդ, հայեցմամբ առիտ, այսուհետև իմ ծառայութեան ամեն մի հնգեակ տարիք բերումն ինձ պանսիօն 160 ման. իմ արդէն ստացած 800-ի վերայ. եւ որովհետև ի վերայ հիման Ձեր գրածի, այժմեան պայմանքը պրօֆեսսորական պաշտօնի ինստիտուտում բաւական չահաւէտ են, ուրեմն պիտոյ էր ցանկալ տեղափոխութեան զէպ ի Մոսկուա, ուր կեանքի յարմարութիւնքը և հանգիստը անհամեմատ առաւել են քան թէ Թիֆլիզում. այս տեղ ես կախ եմ 12, այն 13 մարդու կամքից ու հրամանից և ամեն միևնի բերանից մի առանձին ձայն է լսվում, մինը քան զմիւսը յիմարական, այնպէս որ մարդ կատարեալ խաղալիք է սոցա կամքին. և այսպէս մեծ գործ ես կարելի չէ յառաջացնել շատ սրտցաւութիւն, շատ տառապանք, շատ գլխացաւութիւն, բոլորը ի զուր: Մի բարեկամ ունիմ այս տեղ և այդ է Յակոբ Սերբոբեանցը, որ ամենայն բոպէ մօտ է ինձ իւր ամեննին պատրաստակամութեամբ օգնելու ինձ և թեթեացնելու այս ծանր Թիֆլիզեան կեանքի բեռնը: Նա է և՛ կնքահայրը մեր էմանուէլի:

Իմ նզրայրս այժմ պիտի ստացած լինի Ձեր ուղարկած արժ. 1300 բանկով պ. Սիմէօն Մալխաս. Գուրգոյի վերայ: Մինչև 22 սեպտ. նա դեռ ես ստացած չէր, ինչպէս գրում է ինձ Հաշտօրխանից և կամէր սպասել և ինձ տելեգրամ տալ. բայց տելեգրամ չըս-

տացայ, ուրեմն պիտի ստացած լինի Այսօր, այս բողեխ տեղեկրամ եմ ստանում, որ եղբայրս մինչև այժմ ոչինչ ստացած չէ և մեծ նեղութեան մէջ է. ինչպէս երևում է աղբերի պահասութեամբ. իմ եղբայրս տեղեկրամ է ուղարկած Մուկուա և նորա պատասխանն ևս, ասում է, չկայ:

Անա Ձեր փոխանակագիրը (бексель) 7400 մանկթի ուղարկում եմ Ձեզ, խնդրելով պահել այդ արծաթը Ձեր մօտ նոյն պայմաններով, որպէս մինչև այժմ, ուրեմն և հոգալ ուղարկել ինձ նոր փոխանակագիր (бексель) 1 տարի ժամանակով. այդ արծաթին ևս չկամիմ այսուհետև ձեռնամուխ լինել. թող աճէ դա Ձեր մաքուր և հարազատ ձեռքում իբրև փոքրիկ ժառանգութիւն իմ աղքատ զերդաստանի համար. պիտոյ էր ինձ աշխատել կոտավարուիլ իմ թոշակով, որ փոքր բան չէ, բայց թիֆլիզում, այս մեր թանգութեան մէջ զրեթէ հարկաւոր է լինում կրկնակի ծախք, և արծաթ մնում չէ մարդու քսակում:

Սխալ է այն Ձեզ հասած լուրը, որպէս թէ Այվազը<sup>1)</sup> կարգուած է թիֆլիզու գիւճակում, իսկ Մակարը Բեսասարարիայի Մակարը տակաւին այս տեղ է, և նորա տեղափոխութեան մասին ոչինչ յայտնի չէ այս տեղ: Գուցէ ծածուկ մի բան խմորուած է կամ խմորվում է: Վաթողիկոսը աճա մի շարաթ է, որ գնացած է թիֆլիսից, որպէս ասում են փախչելով խօշերայի երկիւղից. զեղեցկախօս և զբուցասէր մարդ է, բայց մի գործ և պիտանի կարգադրութիւն չտեսանք նորանից ազգի վիճակի բարեկարգութեան մասին. միայն մի քանի տօներ և հանդէսներ կատարնց նա այս տեղ իւր փառքի համար, բայց ոչ աղղը նմա մօտեցաւ և ոչ նա ազգը մօտ քարչեց. լուս ու մունջ ու խուլ ապրեցաւ թիֆլիզում և լուս ու մունջ ու խուլ վեր կաղաւ գնաց, ամենեւն այնպէս, որպէս մեր հայկական կեանքի պատկերն է ամենայն տեղ: Միաբան խորհրդակցութեան և գործակատարութեան շնորհ Աստուած պարգևած չէ մեր ազգին, ամեն մարդ իւր համար է, կաթողիկոս և առաջնորդ և ժողովուրդ. ինչու. որովհետև այս ազգի մէջ գաղափար չկայ. ուր չկայ գաղափար, այն տեղ կարող չէ լինել և գործ, որ միշտ ձեռնում է գաղափարից իբրև իւր յղացող և ծնող մօրից:

Իմ ընտանիքս, Միննա Եղորտինա, Սաշինկան և Օլինկան ուղարկում են Ձեզ ջերմ սիրոյի յարգութեան ողջոյնք, ջանկալով օր մի յառաջ տեսանել և համբուրել իւրեանց սիրելի և ազնիւ բարեկամը:

Ամենեկն Ձեր հարողատ

Ս. Նազարեանց:

1) Գարրիել արքեպիսկոպոս Այվազեան. Թ. Տ. 3.

32.

Թիֆլիս 3-ին նոյեմբերի 1870.

Իմ ազնիւ և խոհական բարեկամ

Մելքոն Փանկանց

Ձեր սիրելի նամակը անցեալ հոկտ. 21-ից հանդերձ փոխանակագրով 7900 մանկթի և 7 ման. ծրարով ստացայ անկորուստ և շնորհակալ եմ Ձեր հողարարձութեան մասին կարգադրելու այս խնդիրը ևս շեմ յիշում այն 11 մանկթի պարտքը, որ մնացած էր իմ վերայ. բայց ուրախ եմ, որ ջնջուած է դաւ և թէ դա Ձեր հաշիւների մէջ գտանուած է, ուրեմն պարտք է, այլ և ինչ հարկաւոր է զլուսի կտորը դորա վերայ, այդպիսի ջնջին բանի վերայ մտածելով ևս շնորհակալ եմ և միշտ գոհ Ձեր բարեկամութիւնից, որ միայն կարելի է արդարութեան և առհասարակ առաքինութեան հիւրքի վերայ, իմ կարծիքով:

Մեծապէս ցաւելով ունիմ ասելու Ձեզ, որ իմ եղբայրը Ձեր ուղարկած արծաթը 1300 ման, շատ անագան ստացած է Գուրգովից, զկնի երկար ժամանակի զուր սպասելու և նեղանալու. Հաշտարխանի մէջ, այն և կորուսանելով ժամանակը նորա առուտորքի նա գրում է ինձ, որ ստացած է արծաթը անցեալ հոկտ. 8-ին. և նորա վաճառականութեան ժամանակը անցած լինելով — նա կամէր իրրիթի տօնավաճառ գնալ և այն տեղ ուզտեր աւնուլ — ստիպուած է այլ տեսակ գործ կատարել, հակառակ իւր դիտաւորութեանը: Ինչպէս երևում է նորա նամակից անցեալ հոկտ. 13-ից, նա ապրանք է առած Հաշտարխանում և նաւով ուղարկած է Բարս, ուր կամէր նա այդ ապրանքը վաճառել և ապա գնալ զէպի Սալիան, ուստի դիտաւորութիւն ունի նա ձուկն և բրինձ բերել Թիֆլիս ևս կարծում եմ, վաճառականութեան մէջ այսպիսի անյաջողութիւնք շատ կը պատահին. բայց ինչպէս երևում է, այս անկարգութեան պատճառն այն է, որ իմ եղբոր առաջին տելեգրաֆական զեպիչը հասած է Ձեզ, որովհետև ազրեսը (հասցէն) օրինաւոր եղած է. մինչև 8 հոկտ. նա մնացած է արծաթից դուրկի Գուրգէ թէ և բանկը մեղապարս լինի այս յետաձգութեան մէջ. Այժմ, թէ այսպէս և թէ այնպէս, աւելորդ է մեզ ցաւիլ, որովհետև անկարգութիւնը եղած է արդէն իւր վնասակար հետեանցով. ևս ևս զուշակում էի արդէն, որ այդպիսի հետաւորութեան մէջ քաղաքից քաղաք արծաթ հասուցանել բանկի տնօրինութեամբ, շատ զժուար պիտի լինի: Ինչ և իցէ:

Դուք գրումէք ինձ, որ ևս գրած եմ առ պ. Քանանովը մի շափից դուրս բարեկամական վստահութեամբ նամակ, յայտնելով նմա իմ վիճակիս բոլոր որպիսութիւնը, մտոանալով որ նա գտան-

վումէ պ. Էմինի սաստիկ աղղկոյութեան ներքոյ իմ գիտաւորութիւնն էր պատուել զնա այդ վստահութեամբ իբրև մարդ, յուսարով որ նա ունի զգացողութիւն և այնքան անձնայարգութիւն, որ կարող էր զին հատանել մի այդպիսի լարեկամական նամակի ևս առ նա միշտ գտանուած եւ բարեմիտ, բարեացակամ, պատուող, մասնակից աննելով զնա իմ ուրախութեանը և սրտովութեանը, միշտ յառաջամատոյց լինելով իմ սպասաւորութեամբ նմա ևս անբարեացակամ չեմ և առ Էմինը, և նա առիս ոչ, որպէս և գրակացնում եմ այն բանից, որ նա հրաժարուելով Մոսկուայից, ինքնին առաջարկեց Ինստիտուտի մեծաւորներին ընտրել զիս իւր վոխարէն դատատու Հայոց լեզուի և դպրութեան Լիցէնտում. ուստի բացայայտ է, որ նա ունեցած է մի շահաւէտ կարծիք իմ մասին և վստահութիւն առ իս:

Ես չգիտեմ, թէ ինչպէս է այժմ նորա տրամադրութիւնը առ իս, բայց մի թշնամական զրահաւորութեան տեղիք կամ պատճառ ընդդէմ միմեանց չունիմք մեք. Քայց եթէ պ. Էմինը կամ թէ խորհրդակից նորա պ. Քանանովը թւիս են նստած անցած գնացած հին օրերի ատելութեան վերայ և ռիակալ են առ իս, այդ ինձ յայտնի չէ. գոնեայ ես մտածում եմ, որ մեր լուսաւոր ժամանակներում ծանայ և ստրուկ լինել իւր կրքին և իւր արտը պնտել միշտ առաջնորդ դատողութեան իւր ընկերի արժանաւորութեան մասին, այդ անարժան է մի կրթեալ և բարոյական մարդու:

Եթէ ճշմարիտ է, որ կամ պ. Էմինը կամ պ. Քանանովը ապկալին վարակուած են այդպիսի անարժան ատելութեան կամ անբարեացակամութեան ատելութեան կամ անբարեացակամութեան ատելութեան կամ, թէպէտ ինձ անյայտ երկոյթներ են դրքա—եթէ վերջինը, այսինքն պ. Քանանեանցը, զկնի այդպիսի մեծարողական վստահութեան առ նա, չունի առ իս ոչինչ այլ զգացողութիւն, բաց ի չարախնդացութիւնից իմ այժմեան վիճակի վերայ, այնուհետև մնումէ ինձ այսքան ասել Չեզ, որ ինձ հազարապատիկ լաւ էր մնալ Թիֆլիզում և երբէք միւսանգամ ոտք չկոխել Լազարեանց դպրոցի մէջ, քան թէ ձգել իմ անձը այդպիսի կարիճների և օձերի մէջ. հազարապատիկ լաւ էր ինձ մնալ այս իմ վիճակի մէջ և քաջութեամբ պատերազմել մարդերի անմտութեան հետ, քան թէ գալ Մոսկուա և ապրել այդպիսի վատթար ընկերութեան մէջ:

Ես այս տեղ նիւթականապէս, խօսելով արդարութեամբ, վատ չեմ դրուած, 2100 մանէթ ունիմ հաստատուն տարեկան թոշակ և որչափ ես մեծ էր իմ պատերազմը մեր ասիամիտ, խառնամիտ և պղտորամիտ Հայերի մէջ, այնուամենայնիւ այս և այն յաղթութիւնը միշտ գրաւած եմ և կը գրաւեմ օրըստօրէ. բայց եթէ և այս պատերազմը կամենայի մի օր վերջացնել—Աստուծոյ լայն ու արձակ

հոգագնդի վերայ տակաւին կը գտանուի և ինձ մի տեղի, ուր կարող էի գլուխս խոնարհեցնել և ապրել խաղաղութեամբ: Եւ մի գործ ևս գտանել ինձ անհնարին չէր:

Շատ ուրախ եմ, որ էմինը այսուհետև պիտի լինի Հայոց լեզուի և դպրութեան պրոֆեսսոր Լազարեանց դպրոցում. ևս չեմ նախանձում նորա բաղդատորութեանը այլ ցանկանում եմ նորա առաւել ևս բաղդատորութեանը: Գուցէ նա աւելի պտղաբեր լինի այդ պաշտօնում, քան թէ ես:

Իւրք գրումէք ինձ, թէ շատ բան ունէիք ինձ գրելու. գրեցէք համարձակ, առանց խիթալու, մի գուցէ ինձ ձանձրութիւն կը պատրաստէիք: Եւ Ձեր նամակները, որչափ ևս երկար լինէին, միշտ քաղցր և ախորժելի կը լինին ինձ համար:

Ոչինչ լսում չեմ մեր բարեկամ Տէր Յարութիւնի և Շախազիզեանի մասին. խնդրեմ մատուցանել նոցա իմ բարեկամական ողջութիւնը:

Իմ ամուսինը, Երեսույքը և փոքրիկ Էմանուէլը ուղարկում են Ձեզ շատ կարօտով և սիրով ողջոյն և մաղթում են Ձեզ յատուածութեամբ ամենայն հոգեւոր և մարմնաւոր բարիք:

Բարեւոյ մնաք ի տէր, և քաջանաւատ առ յարգանքը և սէրը զՁեզ անփոփոխ հաւատարմութեամբ սիրող և յարգող բարեկամի:

Ս. ՆԱԿԱՐԵԱՆԿ.

Վ. Ա. Արուիս.

28 նոյեմբ. 1915 թ.

Յ. Տէր Յակովբեան.

### ԻՍՐԱՅԷԼԱՅՈՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Բրիտանէական կրօնի աղբիւրը, որից բղխել տարածուել են անհուն սիրոյ, կատարեալ վեհութեան, բացարձակ բարութեան և այլ անսահման վսեմ գաղափարներն ու հասկացողութիւնները— այդ Իսրայէլն է, եհնավէի ժողովուրդը, ընտրեալ սակայն բազմաչաքշար ժողովուրդը, որի Մուղիկայի մասին պէտք է լինի մեր խօսքը:

Իր տոկոճութեամբ, կրօնական ջերմեանդութեամբ և ազգային պահպանողականութեամբ մի գարմանալի ժողովուրդ է Իսրայէլը: Մինչդեռ պատմական ու յաղթական եգիպտոսը, կլասիքական Հռովմն ու Յունաստանը, Փիւնիկէն, Լիբովպիան, Ատրեստանը, Միդիան, Լիդիան, Խալդէան և այլն չբացեցել են, Իսրայէլն այնուամենայնիւ պահպանել է իր գոյութիւնը...